

ԱՄՓԱՓԱԳԻՐ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան 2019թ.-ի առաջին կիսամյակի ընթացում դիմած քաղաքացիների դիմումների և բողոքների

2019թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ստացվել է 438 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 335 քաղաքացի: 302 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 33-ը մերժվել, 2019թ-ին արդեն իսկ օգնություն ստացած լինելու պատճառով:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 25 քաղաքացի, որից 10-ի խնդրանքը բավարարվել է, 15-ը՝ մերժվել, (Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով):

գ/ Առողջապահական բնույթի 3 դիմումից դրական պատասխան է ստացել 2-ը, մեկ քաղաքացու դիմում մերժվել է:

Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետական պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 3 քաղաքացիներից 2-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 1 դիմում մերժվել է, (դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով):

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 28 քաղաքացի, բոլորի խնդրանքն էլ բավարարվել է:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել է 12 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով դիմած 18 քաղաքացիներն էլ ստացել են դրական պատասխան:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 2 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի 10 դիմում է ստացվել:

ժ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած 2 քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ